ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՅԺԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 19 - 20 (17128) ՇԱԲԱԹ 11 ՄԱՐՏԻ 2023 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ-ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

«ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ, ԲԱՅՑ...

ԵՐԿՈՒ ՕՐ ԱՆՑ ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾԸ ԵՏ ԿԱՆՉՎԵՑ, ԻՍԿ ՀԱՋՈՐԴ ՕՐԸ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՅՆ ՏԱՊԱԼԵՑ

Մարտի 7-ին, Վրաստանի խորհրդարանը 76 կողմ, 13 դեմ ձայներով, առաջին ընթերցմամբ ընդունեց «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրինանախագիծը: Խորհրդարանի այս որոշումը պատճառ դարձավ քաղաքացիների զանգվածային բողոքի ակցիաների: Արդյունքում, երկու օր անց «Վրացական երազանքը» ետ կանչեց օրինանախագիծը, իսկ արդեն մայիսի 10-ին, խորհրդարանը 35 դեմ եւ մեկ կողմ ձայներով, երկրորդ ընթերցմամբ տապալեց վերոնշյալ օրինանախագիծը:

Օրինանախագծի երկրորդ ընթերցմամբ տապալմանը նախորդել էր «Վրացական երազանքի», «Ժողովրդի ուժի» եւ խորհրդարանական մեծամասնության անդամների համատեղ հայտարարությունը՝ «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մա-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԱՂՄԿԱՀԱՐՈՒՅՑ ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾԸ՝ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌ

Մարտի 6-10-ը, Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսին, մասնավորապես, Թբիլիսիի Ռուսթավելու պողոտան, հայտնվեց համաշխարհային հանրության ուշադրության կենտրոնում:

«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրինանախագծի խորհրդարանական քննարկումներն անցկացվում էին քաղաքացիական ակտիվիստների ու ընդդիմության բողոքի հանրահավաքների ֆոնի վրա: Նշենք, որ ցուցարարների պահանջների պաշտպանությամբ Նյու Յորքից հանդես եկավ նաեւ Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին:

Չնայած Վրաստանի ներքին գործերի նախարարության զգուշացումներին, ցուցարարները բավական հաճախ էին խախտում «Հավաքների

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵ. «ՕՐԻՆԱՆԱԽԱԳԾԻ ԵՏ ԿԱՆՉԵԼԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է. ԿՈՉ ԵՄ ԱՆՈՒՄ ՁԵՐԾ ՄՆԱԼ ՇԱՀԱՐԿՈՒՄՆԵՐԻՑ»

Մարտի 9-ին, օրինանախագիծը ետ կանչելու կապակցությամբ, «Վրացական երազանք» կուսակցության նախագահ Իրակլի Կոբախիձեն ասաց, որ քաղաքական որոշումը կայացված է, ոչ մի դեպքում չի կարող վերանայվել, մնացածը տեխնիկական հարց է, ովքեր փորձում են դա օգտագործել մանիպուլյացիայի համար, կոչ ենք անում զերծ մնալ նման շահարկումներից:

- Այս որոշումը հրապարակված է, եւ հետեւաբար, բնականաբար, այն չի կարող վերանայվել ոչ մի պարագայում: Բոլոր քաղաքական գործիչներին, ովքեր շահարկում են այս թեման, հորդորում ենք զերծ մնալ ոչ պատշաճ հայտարարություններից,- ասաց Իրակլի Կոբախիձեն: Իսկ հաջորդ օրը, մարտի 10-ին, խորհրդարանի լիագումար նիստից հետո, Իրակլի Կոբախիձեն հայտարարեց, որ տվյալ օրինանախագիծը կատարեց իր գործը՝ բոլորն իմացան այն կազմակերպությունների մասին, որոնք ներգրավված են հա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՓՈՔՐԱԹԻՎ, ԲԱՅՑ ԱՆՑՅԱԼՈՎ ՀՊԱՐՏ, ԱԶԱՏԱՏԵՆՉ, ԱՆՊԱՐՏԵԼԻ ԱԶԳ ԵՆՔ»

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԲԵՌԼԻՆՈՒՄ ԲԱՑԵՑ ITB Berlin 2023 ՅՈՒՅԱՇԱՆԴԵՍԸ

Մարտի 7-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին Բեռլինում, Վրաստանի վահանակի մոտ, պաշտոնապես բացեց աշխարհի ամենամեծ զբոսաշրջային ցուցահանդեսը՝ ITB Berlin 2023:

Ցուցահանդեսի բացման արարողությանը ներկա էին ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (UNWTO) գլխավոր քարտուղար Զուրաբ Պոլոլիկաշվիլին, Բեռլինի քաղաքապետ Ֆրանցիսկա Գիֆայը, Գերմանիայի զբոսաշրջության ասոցիացիայի նախագահ (DVR) Նորբերտ Ֆեյբիգը, ճամփորդության եւ զբոսաշրջության համաշխարհային խորհրդի (WTTC) նախագահ Ջուլիա Սիմփսոնը, Բեռլինի տնօրեն Դիրկ Հոֆմանը:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԿԱՐԵՎՈՐՎԵՑ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՎՐԱՍՏԱՆ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Միխեիլ Չխենկելու հրավերով, մարտի 9-10-ին Վրաստանում էր գտնվում Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի գլխավորած պատվիրակությունը:

Մարտի 10-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Վրաստանում գտնվող Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի հետ:

Հանդիպմանը խոսվեց Վրաստանի եւ Հայաստանի միջեւ բազմոլորտ հարաբերությունների եւ ար-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մարտի 7-ին Հայաստանում Վրաստանի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Շարվաշիձեն հանդիպում ունեցավ Հայաստանի անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի, իսկ մարտի 10-ին՝ Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի հետ:

Անվտանգության խորհրդում կայացած հանդիպմանը Արմեն Գրիգորյանը հույս հայտնեց, որ դեսպանի նշանակումը նոր շունչ կհաղորդի հայ-վրացական երկկողմ բազմոլորտ համագործակցությանը եւ մեծապես կնպաստի երկու երկրների միջեւ բարեկամական հարաբերությունների խորացմանը:

Իր հերթին Գիորգի Շարվաշիձեն վստահեցրեց, որ պաշտոնավարման ընթացքում կներդնի առավելագույն ջանքեր՝ զարգացնելու ինչպես տնտեսական, այնպես էլ՝ հումանիտար ոլորտում առկա համագործակցության պոտենցիալը:

* * *

Հայաստանում Վրաստանի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Շարվաշիձեն հանդիպում ունեցավ նաեւ Հայաստանի արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի հետ:

Հանդիպմանը քննարկվեցին վրաց-հայկական հարաբերություններին առնչվող ընդհանուր հետաքրքրության մի շարք հարցեր, անդրադարձ կատարվեց իրավական փոխօգնությանը:

ՎԱՐԿԱՆԻՇ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԱՄՅԱ ԱՌԱՋԸՆԹԱՑՈՎ ՎՐԱՍՏԱՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆՅԱԿՈՒՄ Է

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԵՐԿԻՐ ԵՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒ ՎՐԱՍՏԱՆԸ

Աշխարհի 179 երկրների միջեւ Վրաստանը, ժողովրդավարության տասնամյա առաջընթացի հաշվառմամբ, լավագույն տասնյակի մեջ է:

«Ժողովրդավարության հաշվետվություն-2023» հետազոտության արդյունքները հրապարակել է աշխարհում ժողովրդավարության հետազոտության առաջատար՝ «Ժողովրդավարության բազմերանգություն» (V-DEM) կազմակերպությունը, որը միջազգային մակարդակով ճա-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՓՈՔՐԱԹԻՎ, ԲԱՅՑ ԱՆՑՅԱԼՈՎ ՀՊԱՐՏ, ԱԶԱՏԱՏԵՆՉ, ԱՆՊԱՐՏԵԼԻ ԱԶԳ ԵՆՔ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Բացման միջոցառումից հետո՝ Իրակլի Ղարիբաշվիլին հյուրերի հետ շրջեց վրացական տաղավարով եւ ցուցահանդեսային տարածքներով:

Վարչապետն ուսումնասիրեց նաեւ գերմանական տաղավարը եւ ծանոթացավ ներկայացված նորամուծություններին:

Բեռլինի զբոսաշրջային ցուցահանդեսում վրացական վահանակը գտնվում է 1000 քմ տարածքում, որտեղ ներկայացված են վրացական 80 ընկերություններ:

Բացելով վրացական վահանակը, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ այստեղ ներկայացված է փոքրաթիվ, բայց անցյալով հպարտ, ազատատենչ, անպարտելի վրաց ազգը, եւ որ բազմաձայն երգը Վրաստանի այցեքարտն է, միաժամանակ, մարդկության մշակութային նվաճումը:

- Վրացական գիրը նույնպես հնագույններից ու եզակիներից մեկն է, որին իր վերջնական ձեւը տվել է Փարնավազ I-ը, մ.թ.ա. III դարում, սակայն, ըստ որոշ տեղեկությունների, այն գոյություն է ունեցել մ.թ.ա. 7-րդ դարից: Մեր գրչության հնագույն նմուշներ են հայտնաբերվել ինչպես Վրաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Զգալի փոփոխությունների արդյունքում՝ վրացական այբուբենը ձեւավորվեց երեք տեսակի գրերի հիման վրա:

Մենք ներկայացնում ենք փոքրիկ, բայց անցյալով հպարտ, ազատատենչ, անպարտելի վրաց ազգը:

Մեր երկրի այցեքարտը եւ, միաժամանակ, մարդկության մշակութային ձեռքբերումը բազմաձայն երգեցողությունն է: Վրացական բազմաձայնությունը մարմնավորում է մարդու մեծագույն արժանիքները՝ յուրաքանչյուր անհատի ազատությունն ու յուրահատկությունը եւ հարգանք ուրիշների հանդեպ, համերաշխություն եւ ներդաշնակ համակեցության ձգտում: Թերեւս վրացական ոգին առավել տեսանելիորեն երեւում է իր պարերի մեջ, որոնք հազարամյակների պատմություն ունեն:

Վրացական սեղանը կապված է երգի, պարի, հաղորդակցման ավանդույթների հետ՝ լինելով մեր ամենօրյա մշակույթի եւ սոցիալական գոյության անբաժանելի մասը: Վրացական սեղանը եզակի է ամբողջ աշխարհում, եւ մենք կատակում ենք, որ այն ժողովրդավարական հասարակության առաջին նշանն է, քանի որ այն հավասար հարաբերությունների, հանրային քննարկումների, ավանդույթների շարունակության եւ հաճախ նոր ավանդույթների ծննդավայրն է: Դա հաստատում են Արեւմտյան Վրաստանում հայտնաբերված հնագիտական նմուշները,- ընդգծեց իր ելույթում Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՌՈՒՍ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՕՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏԸ ԿԱԶՄՈՒՄ Է 500 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ

Ըստ արտասահմանյան տնտեսագետ վերլուծաբանների հաշվարկներով, ողջ 2022 թվականի ընթացքում, էներգետիկական հումք հորդառատ գետի շնորհիվ Ռուսաստանի բյուջե մուտք գործող եւ պատերազմական ծախսերը մարող գումարների հոսքը սկսել է նվազել: Ռուսական նավթի ու գազի արտահանումից ստացվող գումարները, մինչեւ Ուկրաինայի ներխուժումը, 2022 թվականի փետրվարի համեմատ, նվազել են կիսով չափ՝ օրական 500 միլիոն դոլարով:

ՉԻՆԱՍՏԱՆ

ՍԻ ՇԻՆՓԻՆԸ ԵՐՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԸՆՏՐՎԵՑ ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՀ

Մարտի 10-ին, Չինաստանի 14-րդ գումարման Ազգային ժողովրդական Կոնգրեսի (խորհրդարան) առաջին նստաշրջանի պատվիրակները, միաձայն քվեարկեցին՝ 70-ամյա Սի Շինփինին, աննախադեպ երրորդ հնգամյա ժամկետով, Չինաստանի նախագահի պաշտոնում վերընտրելու օգտին:

Քվեարկությանը մասնակցել է 2 952 մարդ: Սի Շինփինի վերընտրությունը հնարավոր դարձավ 2018 թ-ին՝ Չինաստանի Սահմանադրության փոփոխություններից հետո. այժմ միեւնույն անձը կարող է անսահմանափակ ժամանակով զբաղեցնել պետության ղեկավարի պաշտոնը:

2022 թ. հոկտեմբերին Չինաստանի Կոմունիստական կուսակցության 20-րդ համագումարից հետո՝ Սի Շինփինը նաեւ երրորդ ժամկետով վերընտրվել էր Չինաստանի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնում:

ԳԵՐՄԱՆԻԱ

ՀԱՄԲՈՒՐԳՈՒՄ ՀԱՐՁԱԿՎԵԼ ԵՆ «ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԻ» ԿԵՆՏՐՈՆԻ ՎՐԱ

Առնվազն 7 մարդ է զոհվել, 24-ը՝ վիրավորվել մարտի 9-ի երեկոյան Համբուրգի «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության տեղական կենտրոնում տեղի ունեցած հրաձգության հետեւանքով: Վիրավորներից 7-ի վիճակը գնահատվում է ծանր: Միջադեպը տեղի է ունեցել քաղաքի Ալստերդորֆի շրջանում:

Հարձակվողի դրդապատճառներն ու միջադեպի հանգամանքներն առայժմ հայտնի չեն: Համբուրգի ոստիկանությունը կարծում է, որ «Եհովայի վկաների» կենտրոնում կրակողը ինքնասպան է եղել:

Իրավապահ մարմինները տեղի ունեցածը գնահատում են որպես «զանգվածային սպանություն՝ մոլագարության հողի վրա»:

ՖՈՐՈՒՄ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ԱՄՆ

Մարտի 6-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին աշխատանքային այցով գտնվում էր ԱՄՆ-ում:

Նյու Յորքում Վրաստանի նախագահը մասնակցեց եւ ելույթ ունեցավ ՄԱԿ-ի Տնտեսական եւ սոցիալական խորհրդի Կանանց կարգավիճակի հանձնաժողովի 67-րդ նիստին, որտեղ քննարկվեցին կանանց եւ աղջիկների հզորացման, նորարարության, տեխնոլոգիական փոփոխությունների եւ թվային դարաշրջանում զարգացման հարցերը:

Նյու Յորք աշխատանքային այցի շրջանակներում՝ Սալոմե Զուրաբիշվիլին հանդիպումներ ունեցավ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտիերեշի, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Ամինա Մոհամմադի, ՄԱԿ-ի կանանց գործադիր տնօրեն Սիմա Սամի Բահուի, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ադմինիստրատոր Ախիմ Շտայների հետ:

Բացի այդ, Վրաստանի նախագահը երկկողմ հանդիպում անցկացրեց ֆորումին մասնակցող երկրների նախագահների եւ Նյու Յորքի քաղաքապետ Էրիկ Ադամսի հետ:

Վրաստանի նախագահն այցելեց Յեյլի եւ Հարվարդի համալսարաններ, որտեղ հրապարակային դասախոսությամբ հանդես եկավ Զոն Քենեդու անվան կառավարման դպրոցում:

Նյու Յորքի Հարվարդի ակումբում Վրաստանի նախագահը, ակումբի անդամների հետ, քննարկեց տարածաշրջանում ստեղծված իրավիճակը եւ աշխարհաքաղաքական իրավիճակը:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ԼԵՎԱՆ ԻՈՍԵԼԻԱՆԻՆ՝ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆ

Մարտի 7-ին Վրաստանի խորհրդարանը, տեւական ծգծգումից հետո, ձեռնամուխ եղավ ժողովրդական պաշտպանի ընտրությանը: Այդ պաշտոնի համար առաջադրվել էր ընդդիմադիր «Քաղաքացիներ» կուսակցությունից խորհրդարանի փոխնախագահ Լեւան Իոսելիանու թեկնածությունը:

Քվեարկության արդյունքում պարզվեց, որ «Վրացական երազանքի» ամբողջական կազմը պաշտպանել է Լեւան Իոսելիանու թեկնածությունը Ժողովրդական պաշտպանի պաշտոնում: Բացի այդ, Իոսելիանին չորսական ձայն է ստացել «Եվրոպացի սոցիալիստներից» եւ «Գիրչիից», երկու ձայն՝ «Մոքալաքեբիից», ինչպես նաեւ անկուսակցական պատգամավորներից, որոնց թվում են Թեոնա Աքուբարդիան, Խաթունա Սամնիձեն, Թամար Քորձաիան: Համակիրների թվում չկան «Ազգային շարժման», «Լելոյի» եւ «Ռազմավարություն՝ Աղմաշենեբելի»-ի ներկայացուցիչներ:

Հիշեցնենք, որ անցյալ տարվա նոյեմբերից, երբ սպառվեց ժողովրդական նախկին պաշտպան Նինո Լոմջարիայի լիազորությունների ժամկետը, խորհրդարանը քննարկեց այդ պաշտոնում տարբեր քաղաքական ու հասարակական միավորումներից առաջադրված գրեթե երկու տասնյակ թեկնածություններ եւ ոչ մեկին չհաջողվեց ստանալ ձայների անհրաժեշտ քանակությունը:

«Քաղաքացիների» կողմից առաջադրված Լեւան Իոսելիանու թեկնածությունը փոխզիջում էր ինչպես կառավարող թիմի, այնպես էլ՝ ընդդիմադիր առանձին կուսակցությունների կողմից:

45-ամյա Լեւան Իոսելիանին ավարտել է Թբիլիսիի Իվանե Զավախիշվիլու անվան պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը, Չիկագոյի Քենտի իրավագիտության դպրոցում ստացել է մագիստրոսի կոչում: Որպես իրավաբան աշխատել է տարբեր բանկերում, ապա հիմնել է իրավաբանական ընկերություն, «Քաղաքացիական շարժում» հասարակական կազմակերպությունը:

2020 թվականի խորհրդարանական ընտրություններին «Քաղաքացիներ»-ից ընտրվել է 10-րդ գումարման խորհրդարանի համամասնական պատգամավոր, խորհրդարանի փոխնախագահ:

Տիրապետում է անգլերեն, ռուսերեն լեզուների, ամուսնացած է, ունի երեք երեխա:

ՌՈՒՍ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԲԱԽՄՈՒՏԻ ՀԱՄԱՐ ՄԱՐՏԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Դոնեցկի մարզի Բախմուտ քաղաքի համար մարտեր են ընթանում արդեն 8 ամիս՝ 2022 թ-ի հուլիսից: Օրեր առաջ ռուսական կողմից հայտարարեցին, որ Բախմուտը գրեթե շրջափակված է: Իսկ Ուկրաինայի բանակի արեւելյան խմբավորման մամուլի ծառայությունից հավաստիացրել են, որ չնայած համացանցում տարածված որոշ հաղորդագրությունների, ուկրաինական ուժերը Բախմուտից չեն հեռացել:

Պատերազմի ուսումնասիրման ամերիկյան ինստիտուտի փորձագետների կարծիքով՝ ուկրաինական ուժերը, ամենայն հավանականությամբ, իրականացնում են Բախմուտից ուժերի սահմանափակ մարտավարական նահանջ, սակայն առայժմ դեռ վաղ է՝ գնահատել ուկրաինական կողմի մտադրությունները՝ կապված քաղաքից լիովին նահանջելու հետ:

Ուկրաինայի զինված ուժերի արեւելյան խմբավորման տեղեկություններով, Դոնեցկի մարզի Բախմուտ քաղաքի համար մարտերի արդյունքում, 100-ից ավելի ռուս զինվոր է զոհվել, 200-ը՝ վիրավորվել:

ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ՍՊԱՆՎԵԼ Է 200 ՀԱԶԱՐ ՌՈՒՍ ԶԻՆՎՈՐ ԵՎ 1800 ՍՊԱ

Ըստ Եվրոպայում ՆԱՏՕ-ի միացյալ ուժերի հրամանատար Քրիստոֆեր Կավոլի հայտարարության՝ Ուկրաինայում սպանվել է 200 հազար ռուս զինվոր եւ 1800 սպա:

Նրա խոսքով՝ Ուկրաինայի դեմ Ռուսաստանի սկսած պատերազմը անհավանական ծավալի է:

Ըստ Կավոլիի՝ Ռուսաստանն արդեն կորցրել է 2 000 տանկ, իսկ ռուսական բանակը օրական միջինը ծախսում է 23 000 հրանոթ:

ՈՒԿՐԱԻՆԱՆ ԱՄՆ-ԻՑ ՈՒ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ ՍՏԱՑԱՎ Patriot-ՆԵՐ

Ուկրաինան ստացել է ԱՄՆ-ի եւ Գերմանիայի կողմից խոստացված երկու Patriot հակահրթիռային պաշտպանության համակարգերից մեկը, սակայն այն դեռ շահագործման մեջ չի դրվել: Ակնկալվում է նաեւ մի քանի Patriot համակարգերի մատակարարում Նիդերլանդներից: Patriot-ը Արեւմուտքի տրամադրության տակ գտնվող միջին հեռահարության ամենաարդիական համակարգն է, սակայն մինչ այժմ այն չի փորձարկվել ռուսական գերձայնային «Կինժալ» հրթիռների դեմ:

Ըստ լրատվական գործակալությունների

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ-ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

«ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ, ԲԱՅՑ...

ԵՐԿՈՒ ՕՐ ԱՆՑ ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾԸ ԵՏ ԿԱՆՉՎԵՑ, ԻՍԿ ՀԱՋՈՐԴ ՕՐԸ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՅՆ ՏԱՊԱԼԵՑ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

սին» օրինանախագիծը ետ կանչելու վերաբերյալ:

Հիշեցնենք, որ Վրաստանի կանոնակարգի համաձայն՝ օրենքի նախագծի պաշտոնական ետ կանչման համար, անհրաժեշտ էր լիագումար նիստում ներկայացնել առաջին ընթերցմամբ ընդունված նախագիծը, դնել քվեարկության երկրորդ ընթերցմամբ ու տապալել այն:

«Օտարերկրյա գործակալների գրանցման մասին» օրինագիծը նախաձեռնողները ետ են կանչել խորհրդարանից: Խորհրդարանի բյուրոյի նիստին ներկայացվել է օրենքի նախագիծը նախաձեռնող «Ժողովրդի ուժ» շարժման պատգամավորների գրավոր դիմումը, որն էլ բավարարվել է:

Օրինանախագծի նախաձեռնողները եւ խորհրդարանական մեծամասնությունը իրենց այդ որոշումը հիմնավորեցին նրանով, որ ընդունված օրենքի նախագիծը հասարակության մեջ կարծիքների տարաձայնություններ է առաջացրել:

«Ստի մեքենան կարողացավ օրինագիծը ներկայացնել բացասական լույսի ներքո եւ մոլորության մեջ գցել հանրության որոշակի հատվածի: Օրենքի նախագծին փակցվել է «Ռուսական օրենք» կեղծ պիտակը, որի առաջին ընթերցմամբ ընդունումը հանրության մի մասի աչքում ներկայացվել է որպես շեղում եվրոպական կուրսից: Բացի այդ, արմատական ուժերը կարողացել են երիտասարդության մի մասին ներքաշել անօրինական գործողությունների մեջ: Շնորհակալություն հերոս իրավապահներին, ովքեր համբերությամբ եւ ամենաբարձր չափանիշներով արձագանքեցին բռնությանը:

Մենք պետք է առավելագույնս զգույշ լինենք մեր երկրում խաղաղության, հանգստության եւ տնտեսական զարգացման, ինչպես նաեւ եվրաինտեգրման ճանապարհին Վրաստանի առաջընթացի նկատմամբ: Ուստի, մեր յուրաքանչյուր համաքաղաքացու էներգիան անհրաժեշտ է ծախսել ոչ թե առճակատման, այլ երկրի ճիշտ ուղղությամբ զարգացման վրա:

Հաշվի առնելով վերը նշվածը, որպես հասարակության յուրաքանչյուր անդամի համար պատասխանատու կառավարող ուժ, որոշել ենք առանց վերապահումների, անվերապահորեն ետ կանչել մեր պաշտպանած օրինանախագիծը»,- ասված է համատեղ հայտարարության մեջ:

ԱՂՄԿԱՀԱՐՈՒՅՑ ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾԸ՝ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

եւ դիրքորոշման արտահայտման ազատության մասին» օրենքի պահանջները, ինչը հանգեցնում էր իրավապահների հետ նրանց առճակատման: Մասնավորապես, ցուցարարները գույքային լուրջ վնասներ հասցրին խորհրդարանի շենքին, ջարդեցին պատուհանները, փորձեցին «մոլոտովյան կոկտեյլի» շշերով հրդեհել այն:

Առճակատումը կիզակետին հասավ մարտի 8-ի լույս 9-ի գիշերը, երբ ցուցարարները շրջափակեցին խորհրդարանի բոլոր մուտքերը, ինչին, ի պատասխան, իրավապահներն օգտագործեցին ջրցան մեքենաներ, արցունքաբեր գազ...: Դիմակայության արդյունքում՝ թե' ցուցարարների եւ թե' իրավապահների թվում կան վիրավորներ, ձերբակալվել է 136 ցուցարար: Նրանց ներկայացվել է հասարակական կարգի խախտման, իրավապահների պահանջներին չենթարկվելու մեղադրանք, թեպետ, օրինանախագծի ետ կանչելու քաղաքական որոշումն ընդունելուց հետո, ՆԳ նախարարությունը բոլոր ձերբակալվածներին ազատ արձակեց:

Ինչպես նշված է ՆԳ նախարարության հայտարարության մեջ՝ այս օրերի իրավախախտումների հետաքննությունը կշարունակվի եւ պատասխանատվության կենթարկվեն կոնկրետ այն անձինք, ովքեր կանխամտածված վնաս են պատճառել իրավապահներին եւ վարչական ունեցվածքին:

ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵ. «ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻՏ ԵՏ ԿԱՆՉԵԼԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է. ԿՈՉ ԵՄ ԱՆՈՒՄ ՉԵՐԾ ՄՆԱԼ ՇԱՀԱՐԿՈՒՄՆԵՐԻՑ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կապետական գործունեության մեջ: Նա շնորհակալություն հայտնեց «Ժողովրդի ուժ» շարժման ներկայացուցիչներին նման նախաձեռնության համար, որը թույլ տվեց հանրությանը հստակ իմանալ, թե ում ֆինանսավորմամբ է կայացել Բակուրիանիի հանդիպումը, ով է ֆինանսավորում «Սիրցխվիլիա» («Ամոթ է»), «Դրոա» («Ժամանակն է») եւ այլ ծայրահեղական կազմակերպությունների, որոնց ֆինանսավորմամբ բոլշեւիկյան քարոզչություն է իրականացվում ուղղափառ եկեղեցու դեմ, ում ֆինանսավորմամբ է խոչընդոտվում երկրի էներգետիկ զարգացումը եւ այլն:

- Մենք կարծում ենք, որ հասարակությունը պետք է լիարժեք տեղեկատվություն ունենա այս ամենի մասին եւ դրա հիման վրա եզրակացություններ անի,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:

ՎԱՐԿԱՆԻՇ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԱՄՅԱ ԱՌԱՋԸՆԹԱՑՈՎ ՎՐԱՍՏԱՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆՅԱԿՈՒՄ Է

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԵՐԿԻՐ ԵՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒ ՎՐԱՍՏԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նաչված նախագծերի թվում միակն է, որի տվյալների վրա հենվում են համաշխարհային բանկի «Գլոբալ կառավարման ցուցիչները»:

Աշխարհի այդ առաջատար կազմակերպության գնահատմամբ, 2012-2022 թվականներին, ժողովրդավարության տեսանկյունից, նշանակալի առաջընթաց է վավերացվել աշխարհի միայն 14 երկրում, այդ թվում՝ Վրաստանում: 2023 թվականի հաշվետվության համաձայն՝ Վրաստանը տասնամյա ժողովրդավարացման, այսինքն՝ ժողովրդավարության առաջընթացի տեսանկյունից, ընդգրկվել է աշխարհում լավագույն տասնյակի շարքում: 2023 թվականի լիբերալ ժողովրդավարական վարկանիշում, Վրաստանն առաջատար է հարեւան երկրների միջեւ եւ ժողովրդավարության մակարդակով առաջ է անցած այնպիսի երկրներից, ինչպիսիք են Լեհաստանը, Հունգարիան, Հյուսիսային Մակեդոնիան, Մոնտենեգրոն եւ այլն:

2023 թվականի լիբերալ ժողովրդավարության վարկանիշի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցնում է Դանիան, երկրորդ եւ երրորդ տեղերը, համապատասխանաբար, Շվեդիան եւ Նորվեգիան:

Կազմակերպության գնահատմամբ՝ 2012 թվականից Վրաստանը որակավորվել է որպես ընտրական ժողովրդավարություն, որտեղ ժողովրդավարության մակարդակը հաջորդ տարիներին բարելավվել է:

«Ժողովրդավարության բազմերանգություն» (V-DEM) կազմակերպության գնահատմամբ՝ Արեւելյան Եվրոպայում եւ Կենտրոնական Ասիայում ժողովրդավարական երկու երկիր են՝ Հայաստանն ու Վրաստանը: Գրեթե քառակի վատթարացել է յոթ երկրների՝ Բելառուսի, Հունգարիայի, Ղրղզստանի, Մոնղոլիայի, Լեհաստանի, Ռուսաստանի եւ Սերբիայի վարկանիշը:

ԻՆՏԵԳՐՄԱՆ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՆԱԽԱՐԱՐԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Մարտի 6-ին, Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերի պետնախարար Թեա Ախվլեդիանին, «Քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման 2021-2030 թվականների պետական ռազմավարության»՝ 2023-2024 թվականների գործունեության ծրագրի նախագծի քննարկման շրջանակներում, հանդիպում ունեցավ ժողովրդական պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնությունների խորհրդի համակարգող Կոբա Չոփլիանու եւ այդ խորհրդի գործադիր քարտուղար Իզաբելլա Օսիպովայի հետ:

Հանդիպմանը քննարկվեցին քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման պետական ռազմավարության 2023-2024 թվականների գործունեության ծրագրի նախագծի կապակցությամբ, ժողովրդական պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնությունների խորհրդի նկատառումները, առաջարկություններն ու հանձնարարականները: Քննարկվեցին նաեւ քաղաքացիական ինտեգրման հրատապ թեմաներն ու հարցերը:

Պետնախարարը ժողովրդական պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնությունների խորհրդի ներկայացուցիչներին շնորհակալություն հայտնեց սերտ ու արգասաբեր համագործակցության համար, ընդգծեց նրանց դերը քաղաքականության արդյունավետ իրականացման գործընթացում:

Հանդիպման ավարտին՝ կողմերը սերտ համագործակցությունը շարունակելու պատրաստակամություն հայտնեցին:

ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ԳՆԵՐԸ ԿՆՎԱԶԵՆ

Վրաստանի նավթամթերք ներկրողների միության նախագահ Վախտանգ Իոբաշվիլու խոսքով՝ այս ամիս վառելիքի գինը կնվազի եւս 30-40 թեթրիով:

Նրա խոսքով, պատճառը Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հայտարարություններն են, մյուս կողմից՝ Ռուսաստանից վառելիքի ներմուծման ավելացումը, որի գինը զգալիորեն ցածր է եվրոպականից:

- Ակնկալվում է, որ դիզվառելիքի գինը լրջորեն կնվազի, այն հաստատ կէժանանա, իսկ բենզինի պարագայում՝ հստակ պատասխան չեմ կարող տալ,- ասել է Իոբաշվիլին:

ԼԱՐԻԻ ՓՈԽԱՐԺԵՔԸ ՀԱՍԱՎ ՀՆԳԱՄՅԱ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ

Շարունակվում է մեր երկրի տարադրամի՝ լարիի կայունացումը: Այն հասել է հնգամյա վաղեմության շեմին եւ ԱՄՆ դոլարի նկատմամբ տատանվում է 2,6-ի սահմաններում: Վերջին անգամ նման փոխարժեք վավերացվել է 2018 թվականի օգոստոսի 31-ին: Դրանից հետո սկսվեց լարիի արժեզրկումը, եւ լարին դոլարի նկատմամբ, 2,8-ի նշագծին անգամ չի մոտեցել:

Ինչպես նշվեց, վերջին հինգ տարվա ընթացքում, լարին առաջին անգամ դոլարի նկատմամբ հասավ 2,6-ի սահմաններին եւ հատկանշական է, որ կայունացման միտումը շարունակվում է:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(10 մարտի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը:

Տարադրամ	Լարի
1 ԱՄՆ ԴՈԼԱՐ	2.5933
1 ԵՎՐՈ	2.7398
100 ՌՈՒԲԼԻ	3.4158
1000 ԴՐԱՄ	6.6838

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԿԱՐԵՎՈՐՎԵԾ ՎՐԱԾ-ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՎՐԱՍՏԱՆ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանձնարարությամբ, երկկողմ համագործակցության եւ համատեղ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր քննարկելու նպատակով, 2023 թվականի մարտի 9-10-ը Վրաստան (Թբիլիսի) գործուղված Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի գլխավորած պատվիրակության կազմում էին փոխնախարար Արթուր Մարտիրոսյանը, նախարարության արտաքին կապերի եւ սփյուռքի վարչության պետ Արկադի Պապոյանը, նույն վարչության մշակութային միջազգային համագործակցության բաժնի պետ Մարիամ Գիգոյանը, «Երեւանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, «Երեւանի Վ.Պետրոսյանի անվան թիվ 51 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Լուսինե Ղասաբօղլյանը:

(Սկիզբը՝ 1-ին էջում)

գասաբեր համագործակցության մասին, ընդգծվեց, որ Վրաստանն ու Հայաստանը միմյանց հետ կապված են բազմադարյա պատմությամբ ու բարիդրացիական հարաբերություններով:

Հանդիպմանը քննարկվեցին կրթության եւ գիտության ոլորտներում երկու երկրների միջեւ առկա համագործակցության եւ այդ ուղղությամբ հարաբերությունների ընդլայնման հեռանկարներին առնչվող հարցեր: Նշվեց, որ վրացական կողմն ակտիվորեն համագործակցում է հայ գործընկերների հետ եւ առաջիկայում կշարունակի ջանքերի գործադրումը՝ կրթության ոլորտում փորձի փոխանակման, կրթության որակի բարելավման եւ բարեփոխումների մշակման ուղղությամբ:

Հանդիպմանը նշվեց, որ Վրաստանի կառավարությունը հավատարիմ է որակյալ կրթության մատչելիության մակարդակի բարձրացմանը:

Վրաստանի կառավարության գրասենյակում կայացած հանդիպմանը ներկա էին Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Միխեիլ Չխենկելին եւ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ՝ ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿ



Մարտի 10-ին կայացավ Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Միխեիլ Չխենկելու եւ Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի հանդիպումը:

Ողջունելով Ժաննա Անդրեասյանի գլխավորած պատվիրակությանը՝ Միխեիլ Չխենկելին առանձնահատուկ կարեւորեց վրաց-հայկական բարեկամական հարաբերությունները: Միխեիլ Չխենկելին Ժաննա Անդրեասյանին շնորհակալություն հայտնեց կրթության ոլորտում բազմամյա արդյունավետ համագործակցության համար: Նա վստահություն հայտնեց, որ ստորագրվող հուշագրի շրջանակում կիրականացվեն համատեղ նախաձեռնություններ, որոնք կնպաստեն վրաց-հայկական բարեկամական կապերի ամրապնդմանը:

Իր հերթին Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն հայտնեց հրավերի եւ ընդունելության համար՝ կարեւորելով բարեկամական սերտ համագործակցությունը Հայաստանի եւ Վրաստանի միջեւ: Երկկողմ հարաբերությունների շարունակական զարգացումն ապահովելու նպատակով՝ նա առաջարկեց զարգացնել եւ ընդլայնել կրթության եւ գիտության բնագավառներում համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորությունները:

Հանդիպմանը նախարարները խոսեցին երկու երկրների հանրակրթական համակարգերի աջակից մեխանիզմների մասին, այդ թվում՝ զրուցեցին ուսուցիչների որակավորման բարելավման եւ մասնագիտական զարգացման ուղղությամբ աջակցության ցուցաբերման, աշակերտների եւ ուսանողների բազմոլորտ փոխանակման ծրագրի ներդրման եւ երիտասարդական մյուս կազմակերպությունների համար նախաձեռնությունների իրականացման մասին, քննարկեցին նաեւ բարձրագույն կրթության եւ գիտության ուղղությամբ համագործակցության խորացման հարցը, ինչը թույլ կտա համապատասխան բուհերում վրաց եւ հայ լեզվի ու գրականության ուսուցման ուժեղացում, իսկ գիտության զարգացման ուղղությամբ կաջակցի համատեղ գիտական նախագծերի իրականացմանը:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Նախարարների հանդիպմանը Ժաննա Անդրեասյանը Վրաստանի կառավարությանն ու անձամբ Միխեիլ Չխենկելուն շնորհակալություն հայտնեց Վրաստանում հայերենի ուսուցմամբ հանրային դպրոցների աջակցության եւ արդյունավետ համագործակցության համար: Ժաննա Անդրեասյանը համագործակցությունը շարունակելու պատրաստակամություն հայտնեց Վրաստանի հայերենով ուսուցմամբ հանրային դպրոցների՝ հայերենի դասագրքերով ապահովման, ինչպես նաեւ հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչների ատեստավորման ընթացակարգերում համագործակցության աշխատանքները շարունակելու վերաբերյալ: Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության հետ համագործակցության արդյունքում՝ շուրջ 18000 կտոր դասագիրք եւ մեթոդական գրականություն առաքվել է Վրաստանի հայերենով ուսուցմամբ հանրային դպրոցներին փոխանցելու համար:

Ժաննա Անդրեասյանը նաեւ հայտնեց իր գլխավորած նախարարության պատրաստակամությունը՝ իրականացնելու հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչների ու դասվարների մասնագիտական վերապատրաստում:

Նախարարը մանրամասնեց Հայաստանի հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումները եւ առաջարկեց դիտարկել փորձի փոխանակման ծրագրեր իրականացնելու հնարավորությունը՝ ուղղված Հայաստանի դպրոցներում վրացերենի՝ որպես երրորդ օտար լեզվի ներդրմանը: Նշվեց, որ փորձի փոխանակումը պետք է իրականացվի հանրակրթության չափորոշիչների եւ կրթական ծրագրի մշակման, ուսումնական գրականության պատրաստման եւ ուսուցիչների կարողությունների հզորացման շրջանակում:

Ժաննա Անդրեասյանը վրացական կողմին շնորհակալություն հայտնեց նաեւ Վրաստանում ապրող հայերին ցուցաբերած աջակցության եւ նրանց համար պետական լեզվի ուսուցման նպաստավոր պայմանների ստեղծման համար: Համոզմունք հայտնելով, որ Վրաստանում ապրող հայերի համար պետական լեզվի ուսուցումը նշանակալիորեն նպաստում է վրաց հասարակայնությանն ինտեգրվելու գործում:

ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Միխեիլ Չխենկելին եւ Հայաստանի կրրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը ստորագրեցին համագործակցության հուշագիր, որը նախատեսում է Վրաստանի եւ Հայաստանի միջեւ սերտ գործընկերություն ինչպես ընդհանուր, այնպես էլ՝ մասնագիտական ու բարձրագույն կրթության ուղղությամբ: Հուշագրի շրջանակներում՝ կողմերը պատրաստակամություն հայտնեցին համատեղ նախագծեր իրականացնել Վրաստանի եւ Հայաստանի համալսարաններում վրացագիտության, հայագիտության նոր կենտրոնների ստեղծման ուղղությամբ:

Հանդիպման ավարտին՝ Ժաննա Անդրեասյանը Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Միխեիլ Չխենկելուն հրավիրեց Հայաստան:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԹԲԻԼԻՍԻԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Պաշտոնական այցի շրջանակներում՝ Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի գլխավորած պատվիրակությունն այցելեց Իվանե Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարան:

Համալսարանում պատվիրակության անդամները հանդիպում ունեցան բուհի ռեկտոր Ջաբա Սամուշիայի հետ: Հանդիպմանը մասնակցեցին նաեւ կրթության փոխնախարար Արթուր Մարտիրոսյանը եւ ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը:

Հանդիպմանը Ջաբա Սամուշիան առանձնահատուկ կարեւորեց միջբուհական համագործակցությունը՝ ընդգծելով, որ նախարարի առաջին այցը Թբիլիսիի պետական համալսարան խորհրդանշական է: Ռեկտորն անդրադարձավ համալսարանում 1922 թվականին հիմնադրված հայագիտական ամբիոնի գործունեությանն ու զարգացման հեռանկարներին: Նա նշեց, որ հայագիտության ամբիոնում կրթությունը կազմակերպվում է բոլոր մակարդակներում՝ բակալավրիատ, մագիստրատուրա եւ ասպիրանտուրա: Ջաբա Սամուշիան տեղեկացրեց, որ բակալավրիատում ավելացրել են եւս 60 կրեդիտ, որի շրջանակում կպատրաստվեն նաեւ համապատասխան ուսուցիչներ:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար Ժաննա Անդրեասյանը կարեւորեց հայ-վրացական բարեկամական կապերը, ընդգծեց Թբիլիսիի պետական համալսարանի հայագիտական ամբիոնում մանկավարժական կադրերի պատրաստման կարեւորությունը:

Նախարարը վստահեցրեց, որ Հայաստանի կառավարության ծրագրում առանձնահատուկ տեղ է գտել դպրոցներում տարածաշրջանային լեզուների զարգացումը, եւ այդ նպատակով սեպտեմբերից Հայաստանի երեք դպրոցում դասավանդվում է վրացերեն:

Հանդիպման ավարտին՝ Երեւանի պետական համալսարանի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը եւ Թբիլիսիի պետական համալսարանի ռեկտոր Ջաբա Սամուշիան ստորագրեցին համագործակցության հուշագիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԱՅՑԵԼԵՑ ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՋԱԽՆԵՐ

Վրաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում՝ Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի գլխավորած պատվիրակությունն այցելեց Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոց, հանդիպում ունեցավ կրթօջախի մանկավարժների, աշակերտների, ծնողների հետ, ապա եղավ Վիրահայոց թեմի Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում, շրջայց կատարեց «Հայարտուն» կրթամշակութային եւ երիտասարդության կենտրոնում:

Հայաստանի կրթության գիտության, մշակույթի եւ սպուրտի նախարար Ժաննա Անդրեասյանը, Վրաստանի մշակույթի փոխնախարար Իրակլի Գիվիաշվիլու ուղեկցությամբ, եղավ նաեւ Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի նորակառույց շենքում, ծանոթացավ մշակույթի օջախի շինարարության եզրափակիչ փուլի աշխատանքներին:

* * *

Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի պաշտոնական այցի շրջանակներում կայացած հանդիպումներին ներկա էին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը, Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի փոխնախարար Արթուր Մարտիրոսյանը, ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, Վրաստանի կրթության եւ գիտության առաջին փոխնախարար Թամար Մախարաշվիլին, փոխնախարարներ Վալերիան Գոբրոմիձեն եւ Նունու Միցկեւիչը, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանը, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, թատրոնի տնօրեն Լուիզա Խաչատուրովան:

Ըստ Վրաստանի վարչապետի աշխատակազմի մամլո ծառայության,Վրաստանի եւ Հայաստանի կրթության նախարարությունների մամլո ծառայությունների նյութերի